# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*08 փետրվարի 2024 թվականի* N 2-Ա

### *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչներ Ռոստամ Ջամարի Մամոյանը, Նազիկ Ջնդոիի Մամոյանը, Սերյան Ռոստամի Մամոյանը, Սվետլանա Ռուստամի Մամոյանը, Թեհմինե Ռուստամի Մամոյանը, Զոհրաբ Ռուստամի Մամայանը դիմել են Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի 5 հասցեում գտնվող իրենց պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.03.1991թ. թիվ 1 որոշման/ / 0.1 հա օրինական և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով.

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկ փողոցի 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Ռոստամ Ջամարի Մամոյանի ՝ /ծնված 13.03.1958թ./, Նազիկ Ջնդոիի Մամոյանին ՝ /ծնված 24.10.1960թ./, Սերյան Ռոստամի Մամոյանին՝ /ծնված 31.07.1981թ./, Սվետլանա Ռուստամի Մամոյանին՝ /ծնված 24.10.1983թ./, Թեհմինե Ռուստամի Մամոյանին՝ /ծնված 19.06.1987թ./, Զոհրաբ Ռուստամի Մամայանին՝ /ծնված 08.06.1985թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրաց սեփականության իրավունքը օրինական 0.1հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն 164.0ք/մ կառուցված 1991թ.:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Ռուստամ Ջամարի Մամոյանին /ծնված 13.03.1958թ./,Նազիկ Ջնդոիի Մամոյանին /ծնված 24.10.1960թ./, Սերյան Ռուստամի Մամոյանին /ծնված 31.07.1981թ./, Սվետլանա Ռուստամի Մամոյանին /ծնված 24.10.1983թ./, Թեհմինե Ռուստամի Մամոյանին /ծնված 19.06.1987թ./, Զոհրաբ Ռուստամի Մամայանին /ծնված 08.06.1985թ./,, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 5 բնակելի տուն:

5.Ուժը կորցրած համարել Ֆերիկ համայնքի ղեկավարի 28.12.2023թվականի թիվ 20-Ա որոշումը և հիմք ընդունել նոր որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 փետրվարի 2024 թվականի N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀԱՄ-ՖՀ-ԳՀԾՁԲ-24/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունով և 26-րդ կետի 1-ին ենթակետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի կարիքների համար աղբահանության ծառայության ձեռքբերման նպատակով ստեղծել ՀՀԱՄ-ՖՀ-ԳՀԾՁԲ-24/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՀԱՍԱՆՅԱՆ

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*
*Ֆերիկ համայնքի ղեկավարի*
*2024 թվականի փետրվարի 8–ի*
*N 3-Ա որոշման*

# ԿԱԶՄ

## ՀՀԱՄ-ՖՀ-ԳՀԾՁԲ-24/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝ Անի Գրիգորյան

Քարտուղար՝ Մամե Մամոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2024 թվականի N4-Ա

ՖԵՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՆԵԼ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀՐԱՉՅԱ ՆՈՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎՐԱ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ ենթակետերով.**

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Ֆերիկի համայնքապետարանի գնումների գործընթացի համակարգողի պարտականությունները դնել առաջատար մասնագետ Հրաչյա Նորիկի Խաչատրյանի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀԱՍԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔ

---

Հասցե՝22 Արմավիրի մարզ, Ֆերիկ համայնք
Էլ. Փոստ՝ ferik.gp@mail.ru

08.02.2024թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N5-Ա

### ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 1 ՀԱՆԳՈՒՑՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ֆերիկ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 25-ի թիվ 12 որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ֆերիկ համայնքի 2024 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 50.000/վաթսուն հազար/ 22 դրամ Ֆերիկ համայնքի թվով 1 /մեկ/ հանգուցյալի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել՝ համաձայն կից ցուցակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՀԱՍԱՆՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ

համայնքի ղեկավարի 2024թվականի

փետրվարի 8-ի թիվ 5-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| N | Ազգանուն,անուն,հայրանուն | Անձը հաստատող փաստաթուղթ | Գումար ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Ասատրյան Զադինա Խուլիխանի | 004806685 | 50.000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 փետրվարի 2024 թվականի N 6-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Ֆերիկ համայնքապետարան) 4261 հոդվածից 49030 (քառասունինը հազար երեսուն) ՀՀ դրամ փոխանցել h/h 16009626242500 հաշվեհամարին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱՍՍԱՆՅԱՆ**